
ՏՐԱՆՍԼԻՏԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ
ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հ. Հ.

Բազմաթիվ հետազոտողների և Մփյուռքի նախարարության տրվյալների համաձայն՝ սփյուռքի 95%-ից ավելին հայերեն կարդալ չի կարողանում: Դրանով պայմանավորված՝ դժվարանում են գրավոր հայերեն մշակույթին ծանոթանալը և գրավոր փոխադարձ շփումները և այլն:

Ժամանակակից համակարգչային տեխնիկան և կապի միջոցները, որոնք հիմնված են լատինական այբուբենի վրա, է՛լ ավելի բարդացրին հայատառ շփումները և՛ սփյուռքում, և՛ Հայաստանում, և՛ այս երկուսի միջև: Եվ ժողովուրդը գտավ ելքը՝ շփվում է օգտագործելով հայերենը և լատինական-անգլիական այբուբենը: Քանի որ այս խնդիրը կա նաև այլ ոչ լատինատառ լեզուների համար (օրինակ՝ որոշ սլավոնական, չինական և այլ հիերոգլիֆներից օգտվող լեզուներում և այլն), ապա նրանք նույնպես անցան հիմնականում անգլիատառ շփումների՝ հեռախոսներով և համակարգիչներով: Այս երևույթը կոչվեց տրանսլիտ:

Ոմանք ենթադրում են, որ եթե տեղադրեն հայկական այբուբենը համակարգիչներում և հեռախոսներում, հարցը կլուծվի: Բայց իրականությունն այլ է: Ամերիկայի, Եվրոպայի և Ռուսաստանի հայերը սովոր են լատինական և ռուսական այբուբեններին և դժվարանում են հայերեն կարդալ:

Ի՛նչն է ավելի կարևոր ազգապահպանման համար՝ պահպանել լեզո՞ւն, թե՞ զիրքը: Բնականաբար ազգի հիմքն է լեզուն. ովքեր խոսում են հայերեն, գիտակցում են, որ հայ են: Օրինակ՝ ռեժիսոր Չախամախյանը Նյու Յորքից հայտնեց ռադիոյով՝ «Մեր դերասանները սովորում են դերերը գրված հայերեն լեզվով, բայց անգլերեն տառերով» , այսինքն՝ այս խումբը զոհաբերել է հայկական տառերը, բայց պահպանել է լեզուն: Եվ սա շատ տարածված երևույթ է սփյուռքում:

Իսկ ինչպես են լուծում հայերի համար ևս այս հրատապ պրոբլեմը (քանի որ սփյուռքը մոտ երկու անգամ ավելի մեծ է, քան Հայաստանի բնակչությունը) այլ ժողովուրդները: Չինաստանում համակարգիչների վրա աշխատողները գիտեն տասից պակաս հիերոգլիֆներ, իսկ միջին մակարդակով կարդալու համար անհրաժեշտ են մի քանի հազարը. նրանք օգտվում են լատինատառ այբուբենից:

Իսկ Խորվաթիայում տրանսլիտը, այսինքն՝ լատինատառ համակարգչային այբուբենը, ընդունվել է որպես ևս մեկ պաշտոնական այբուբեն՝ թույլատրված օրինական օգտագործման համար:

Մոսկվայի համալսարանը մշակել է լատինատառ այբուբեն ռուսերենի համար, իսկ Ղազախստանը որոշել է անցնել լատինատառ այբուբենի:

Նկատի ունենալով, որ հայերս ունենք մեծ սփյուռք և բազմաթիվ խառնամուսնություններ, որոնց երեխաները աճում են ռուսական և եվրոպական լեզուների շրջապատում, այդ զանգվածի հայությունը պահպանելու համար անհրաժեշտ է նրանց հնարավորություն տալ կարդալու հայկական պոեզիան, գրականությունը և պատմությունը մատչելի գրերով, իսկ այդ գրերը համակարգիչներում և հեռախոսներում լայնորեն օգտագործվող հայկական տրանսլիտն է, որի մեծ մասը արդեն մշակված է, իսկ մի քանի դժվար արտահայտվող տառերը պետք է մշակել և ընդունել:

Հենց այդ պաշտոնապես ընդունված համակարգչային այբուբենով պետք է գրվեն հայ գրականության և պատմության լավագույն նմուշները:

Այս ամենը անհրաժեշտ կլինի տարածել համակարգիչներով և տպագիր, հատկապես սփյուռքի համար: Սա կլինի հայապահպան միջոց, քանի որ կպահպանվի և՛ լեզուն, և՛ մշակույթը:

Հավանաբար պետք կլինի հայտարարել մրցույթ լավագույն տրանսլիտ այբուբեն ստեղծելու համար: Այդ այբուբենը անհրաժեշտ է հեշտ կարդալու և սովորելու համար:

Նշենք, որ տրանսլիտը արդեն երկար ժամանակ օգտագործում են ուստիկանությունը, փոստը, նոտարները, բանկերը՝ գրելով հայկական անունները և հասցեները անգլերեն տառերով:

Բերենք օրինակներ տրանսլիտի օգտագործման՝

E. Charenc

Ajd menq enq erevi
Ajn uxty hastakox',
Vor Hisusi ar'akin hakar'ak,
Piti mtnenq angam
Asex'i nurb c'akov
Apagaji draxty' anarat.

Smbat Shahaziz

Eraz

Es lseci mi anush z'ajn, -
Im Ceracac mor mot er -
Phajlec nshujl uraxuthjan,
Bajc aphsos, vor eraz er.

Karkachahos ax'bjurn ajntex'
Thavalum er margarit. -
Na hstak er vorpes bjurex',
Ajn eraz er cnoramit:

c - g		փ - ph - Fh		ծ - ts - Շ - շ
x' - ղ		p - kh - q		ձ - ջ - ճ
th - թ				n - r'

Պետք է նշել, որ հայատառ գրերից լատինատառի անցնելը՝ վերատպելը, բնականորեն գործ է համակարգչով մասնագետի համար:

Բնարկե, այստեղ առաջանում է հայկական գրերի ապագայի հարցը. լեզվի պահպանությունը, անշուշտ, առաջնային է, ինչի համար էլ պետք է ընդունել տրանսլիտ լատինատառ համակարգչային այբուբենը որպես օրինական՝ ևս մեկ հայկական այբուբեն համակարգիչներում և հեռախոսներում օգտագործելու համար:

**ТРАНСЛИТ И СОХРАНЕНИЕ
ИДЕНТИЧНОСТИ АРМЯНСКОГО НАРОДА**

ОВАНИСЯН Г. У.

Резюме

В основном представители армянских диаспор не умеют читать по-армянски в силу сложности современного армянского алфавита, а также широкого использования английского алфавита в компьютерных сообщениях и телефонных SMS на армянском языке. С этой целью предлагается еще один официальный алфавит – компьютерный армянский алфавит на основе английского алфавита.

TRANSLITERATION AND PRESERVING THE ARMENIAN IDENTITY

H. HOVHANNISYAN

Abstract

Most people in the Armenian Diaspora cannot read Armenian and use the English alphabet for text messaging in Armenian. It seems appropriate to develop a new official alphabet based on an English one for computer correspondence in Armenian. Such an alphabet will help all the Armenians access the Armenian language, literature, and culture.